

ՍԽԱԼՆԵՐՈՎ ՀԱՐՈՒՍՏ ՄԻ ԳՐՔՈՒՅԿԻ ՄԱՍԻՆ

Կանաչապատման ու ծաղկապատման աննախընթաց վերելքը այդ բնագավառի մասնագետների առաջ կարևոր խնդիր է դնում, իրենց ցուցումներով ու խորհուրդներով օգնել արտադրության աշխատողներին այդ գործը կատարել ճիշտ, պիտական հիմունքների վրա:

Այս տեսակետից մայրենի լեզվով լույս տեսած յուրաքանչյուր փոքր և մեծ աշխատություն արժանի է խրախուսանքի:

Այս տրամադրությամբ էլ մենք սկսեցինք ծանոթանալ «Հայաստան» հրատարակչության կողմից 1970 թվին լույս ընծայած Ա. Վ. Անդրեասյանի «Խորհուրդներ կանաչապատման մի քանի հարցերի առթիվ» գրքույկի հետ:

Սակայն պետք է նշել, որ գրքույկը բավական չափով առատ է թերություններով և սխալներով:

Յուրաքանչյուր աշխատություն, իր առջև մի ինչ որ խնդիր է դնում, ո՞րն է սույն աշխատության խնդիրը և ո՞ւմ համար է այն դրված: Մասնագետներին այն պետք չէ, որովհետև ոչ մի պիտանի և ճիշտ մասնագիտական դրույթ, առավել ևս նորություն այնտեղ չկա, կանաչապատման պրակտիկ աշխատողներին նույնպես պետք չէ, որովհետև չկան այնպիսի գործնական խորհուրդներ, որոնք ինչ որ չափով նպաստեին գործին:

Ասածը հիմնավորելու համար բերենք մի քանի օրինակներ: Նախ պետք է ասել, որ քննարկվող հարցերը ընտրված են առանց որևէ սկզբունքի ու հետևողականության:

Բավականին մեծ բաժին հատկացված է սիզամարգերին (գաղոն), որից ընթերցողը չի կարող նույնիսկ մոտավոր պատկերացում ունենալ, թե ինչ է սիզամարգը: Սկզբում բերում է սիզամարգի ստեղծման ինչ որ մի եղանակ, որը ի դեպ ասած մտադածին է, և ապա ասում, որ նախկինում այդպես էր արվում, իսկ այժմ այլ ձևով պետք է արվի: Այնուհետև սիզամարգերը երեք տիպի է բաժանում (որը նույնպես թերի է, քանի որ նրանք ավելի շատ տիպեր ունեն) և մի քանի խոսք է ասում միայն նրանց խնամքի մասին: Այդ բաժնից պարզ երևում է, որ հեղինակը պատկերացում չունի թե, ինչ բան է պարսեղային կամ ծաղկային սիզամարգը: Այսպես օրինակ՝ նա գրում է, որ ծաղկային սիզամարգը պահանջում է հաճախակի խուզում, մինչդեռ իրականում դա սիզամարգի այն միակ տեսակն է, որը բոլորովին խուզել չի կարելի:

Այնուհետև հեղինակը բերում է չորս բույսի նկարագրություն, որոնք ևս ընտրված են պատահականորեն, անունները զրված են սխալ, այսպես՝ նա գրում է կարմիր պոչուկ, արոտային պոչուկ, մինչդեռ այդ բույսերը հայերեն կոչվում են շյուղախոտ, իսկ պոչուկը բոլորովին այլ բույս է, դրանց նկարագրությունը խիստ թերի է, այսպես օրինակ՝ կարմիր պոչուկի մասին գրված է «խոտարույսը լավ է աճում թեթև հողերում և ոչնչով հտ չի մնում մյուսներից»: Միթե սրանից հասկացվեց թե նա ինչ բույս է, ինչ նշանակություն ունի և ինչպես պետք է մշակել:

Ցանքի նորման բաժնում գրում է, «որոշ բնկերներ առաջարկում են հեկտարում ցանել 150—200 կգ խոտարույսերի խառնուրդ, այնուհետև քննադատելով այդ բանակը ինքը առաջարկում է մեկ հեկտարում ցանել ոչ ավել 90—100 կգ: Նման զրվածքը հիմնականում սխալ է, քանի որ երբեք չի կարելի մեկ նորմա առաջարկել. դա աշխատողներին մեծ թյուրիմացության մեջ կգցի, քանի որ ցանքի նորման կախված է բույսի տեսակից, որոշ տեսակներ ցանվում են իսկապես 150—200 կգ, իսկ կան բույսեր էլ, որոնց նորման ընդամենը 10—20 կգ է:

Սիզամարգերի պարարտացման մասին խոսելիս հեղինակը մի բաժին նվիրել է հողերի կրացմանը, մեր պայմաններում այդ մասին խոսել անգամ չի կարելի, քանի որ Հայաստանի հողերը շատ հարուստ են կրով և այստեղ խոսք կարող է լինել կրի դեմ պայքարելու մասին միայն և ոչ կրացման:

Խոսելով մարգագետնային սիզամարգերի մասին (էջ 35) հեղինակը գրում է, «որ առաջին տարին ցանք չպետք է կատարել, այլ միայն ստեղծել դրենաժային առուններ»: Այս զրվածքը մեր պայմանների համար միանգամայն սխալ է, քանի որ մեզ մոտ ստորերկրյա ջրերը շատ ցածր են և դրենաժի ոչ մի կարիք չկա:

Այս և նման շատ դրույթներ ցույց են տալիս, որ հեղինակը այդպիսիք վերցրել է ՍՍՀՄ հյուսիսային մասերի համար գրված գրականությունից առանց հաշիվ առնելու տեղական պայմանները:

Նույնաման և դեռ ավելի սխալներ ու անհեթեթություններ կան նաև «Ժաղկարույսերի անցումը հիդրոպոնիկ եղանակով գլխում», որը պաշտոնապես է 18 էջ: Այստեղ աղավաղված ձևով բերվում են հիդրոպոնիկայի մասին պատահարար լսած կամ ղանազան գրքերում կարդացած տեղեկություններ: Ոչ մի խոսք չի ասվում այն մասին, թե ինչ է հիդրոպոնիկան և ինչի համար է կիրառվում: Աղձատ կերպով բերվում է Մոսկվայի մի տնտեսության փորձը, որի նկարագրությունից սակայն ոչինչ չի հասկացվում: Բաժինը լեցուն է ավելորդաբանություններով և նյութին չվերաբերող մտքերով ինչպես նաև անթիվ, անհամար սխալներով: Էջ 47-ում գրում է. «Զուրը եթե բարձրանա, խճաքարին հասնի, ապա կամրացնի նրան» — թե ինչու պիտի ջուրը քարին ամրացնի, հասկանալի չէ: Հիդրոպոնիկայի բաժնում խոսում է ազոտով և ֆոսֆորով սնուցում տալու մասին, այնպես կարծես թե հարցը սովորական հողային կուլտուրային է վերաբերվում: Բերում է վարդերի ղանազան «տեսակների» ցուցակ, որոնք խիստ պատահական են, ոչնչով չհիմնավորված, այնուհետև այդ ցուցակից 3-ը նկարագրում է ավելի մանրամասն. ինչու այդ երեքը հայտնի չէ, քանի որ դրանք ոչ ամենալավերն են, ոչ էլ մեղ մոտ ստուգված, այլ պատահական անուններ են: Անընդհատ խառնում է տեսակ և սորտ հասկացողությունները վարդի սորտերը անվանելով տեսակ — սա շատ կոպիտ սխալ է, սխալներ շատ կան նաև բույսերի անուններում և մասնագիտական տերմիններում: Այսպես օրինակ՝ Լեյվենխոլս — պետք է լինի Լեվենհոբստ, տուբերետդա — պետք է լինի տունբերգիա, կավկասյան — պետք է Կովկասյան, նեխած գոմաղը՝ պետք է փտած գոմաղը և այլն:

Էջ 18-ում գրված է «որպեսզի մեխակի համար սննդարար հողախառնուրդ պատրաստել, պահանջվում է երկու տարի»: Իրականում այդ հողը կարելի է պատրաստել մի քանի օրում:

Հաջորդ գլխի վերնագիրն է «Մի քանի տարածված կարևոր բույսերի մասին» սպասում էինք թե այստեղ համառոտակիորեն պետք է տրվեր ամենատարածված և կարևոր մի շարք ծաղկային բույսերի (մի քանի տասնյակ) մշակման առանձնահատկությունները մեր պայմաններում: Ուսկայն այստեղ բերվում է միայն չորս բույս (թրաշուշան, վարդակակաչ, շուշան և քաջվարդ), որոնցից միայն առաջին երկուսն են, որ իսկապես շատ կարևոր են և տարածված: Շուշանը մեղ մոտ հազվագյուտ բույս է, որովհետև տեղական պայմաններում շատ վատ է աճում չհարմարվելով մեր կլիմային և հողին, և ոչ մի հեռանկար չունի: Քաջվարդը ճիշտ է, կարևոր ծաղկային բույս է, սակայն նույնպես համեմատաբար քիչ է տարածված: Իսկ ուր են նարգիզը, քրիդանթեմը, վարդը, հյդրեանին, աստղածաղիկը, կաննան և շատ ու շատ այլ բույսեր:

Նշված չորս բույսի մասին էլ գրված է այնպես, որ եթե որեէ քաղաքացի ցանկանա այս գրքուկի օգնությամբ աճեցնել այդ բույսերը, ապա ոչ մի արդյունքի չի հասնի: Այնտեղ ավելի շատ սխալներ կան, քան ճիշտ խորհուրդներ:

Թրաշուշանի մասին գրված է, (էջ 57) «որպեսզի ավելի փարթում աճեն անհրաժեշտ է ցողունի վրա թողնել միայն 2 տերև»: Բույսը նորմալ աճում է միայն այն դեպքում, երբ նրա վրա շատ տերևներ կան, երկու տերև թողնելու դեպքում բույսը կնվազի և նրանից ոչ մի արդյունք չի ստացվի:

Նույն էջում գրված է «պալարասոխը հողից պետք է հանել շատ զգույշ, որպեսզի հողագունդը չքանդվի» այս խորհուրդին հետևելու դեպքում աշիատանքը այնքան կգժվարանա ու ինքնարժեքն այնքան կբարձրանա նրա, որ ձեռնառու չի լինի թրաշուշան աճեցնելու: Իրականում թրաշուշանի պալարասոխերը պետք է հանել առանց հողաղնդի, դեռ ավելին, դաշտում հողը պետք է վրայից թափ սալ և պալարասոխերն ու ձաղուկները հավաքել:

Էջ 59-ում գրում է «փորձերը ցույց են տվել, որ ամենանպատակահարմար տեսակներն են Լեյվենխոլսը, կանտատա, լեյվինգեր — դրիմ, գլորի ֆոն նորարվիգ, շենպրինցեսին» նախ սրանք ոչ թե տեսակներ են այլ սորտեր, երկրորդ — անունները աղավաղված են և սույա այդ ո՞ր փորձերն են ցույց տվել:

Էջ 61-ում գրում է «Հայաստանի պայմաններում խորհուրդ է տրվում բազմացնել հետևյալ սորտերը...» և ապա բերում է մի շարք անուններ, այդ ինչի հիման վրա է խորհուրդ տալիս — հասկանալի չէ, քանի որ Հայաստանում այդ սորտերի վերաբերյալ փորձեր կատարված չեն: Էջ 62-ում գրված է, որ թրաշուշանը վարակվում է նույն հիվանդություններով ինչ որ մյուս սոխուկավոր ու պալարավոր բույսերը — սա նույնպես սխալ է:

Վարդակակաչի մասին գրված է, որ «հիմնականում օգտագործվում են» հիբրիդային և պարկային տեսակներ» վարդակակաչը պարկային տեսակ չունի, հեղինակը վարդն ու վարդակակաչը շփոթում է իրար հետ: Ինչ վերաբերում է հիբրիդայինին, դա ոչ թե տեսակ է, այլ խումբ:

Բոլորովին չխոսելով վարդակակաչի նշանակության բնութագրման և մանավանդ մշակման առանձնահատկությունների մասին, 5 էջից հրկուսը հատկացված է ինչ որ սորտերի անունների թվարկմանը, ըստ որում այդ անունները պատահաբար վերցված են դանազան գրքերից:

Շուշանին վերաբերող բաժինը ևս հարուստ է սխալներով: Հենց սկզբում գրում է «մինչև վերջին ժամանակները նրա դասակարգումը չէր տրված» — սա միանգամայն սխալ է, քանի որ շուշանի դասակարգման երկու սխալներ տրված էր դեռ շատ վաղուց, որից և օգտվում էին մասնագետները և այդ դասակարգման սկզբունքով բազմաթիվ գրքեր են գրված: Էջ 68-ում գրված է արևոտ և բաց հողամասում կարող են աճել տիրեթյան վիլյեմոտյա, տունբերգա, հովանոցավոր» և բերված է 12 անուն: Նախ ասենք, որ այդ անուններից շատերը աղավաղված են, ապա պետք է նշել, որ այդ տեսակների 90 տոկոսը ոչ թե արևոտ տեղում, այլ ընդհանրապես մեր պայմաններում աճել չեն կարող, բարձր ջերմության, օդի չորության և հողի խիստ կրայնության պատճառով:

Քաջվարդին վերաբերող գլուխը ևս ոչնչով չի տարբերվում մյուսներից, այսպես 2-րդ պարբերությունում գրված է՝ «կուլտուրական տեսակները մեծ մասամբ առաջացել են քաջվարդերից....» հետաքրքիր է իմանալ քաջվարդը ուրիշ ինչից պիտի առաջանար, կամ ինչու մեծ մասամբ, իսկ փոքր մասը ինչից է առաջացել:

Նույն պարբերության վերջում գրված է «Ամենատարածված և լավագույն քաջվարդերից են՝ աանյուհետև բերվում է 22 անուն համառոտակի նկարագրությամբ, որտեղ տեսակ, խումբ և սորտ խառնված են իրար և ոչինչ չի հասկացվում թե դա ինչ անիմաստ և անփույթ կուտակում է:

Խոսելով ծառանման քաջվարդի մասին գրում է «մեզ մոտ այն ծաղկում է միայն մայիսին»: Այս դարձվածքից կարելի է միայն եզրակացնել, որ հեղինակը գաղափար անգամ չունի, թե ինչ բան է ծառանման քաջվարդը, քանի որ Հայաստանում այդ բույսի մեկ օրինակ անգամ չկա:

Ընդհանրապես նյութը ոչ մի կարգաբանման չի ենթարկվել, տրված են պատահական սխալ տեղեկություններ, քաղված պանազան գրքերից կամ ուղղակի մտածածին բերված են բոլորովին խառնաշփոթ ձևով:

Մենք սույն հոդվածում բերեցինք սխալների մի շնչին մասը միայն:

Զ. Ա. ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ